



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29 հունվարի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալը, աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, անշարժ գույքի կառավարման, վերահսկողության, տրանսպորտի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ նիստի օրակարգի 6-րդ հարցի՝ «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության հրավերով նիստին մասնակցում է «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Դավիթ Մկոյանը:

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց.

ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Մաշա Կատվայանը և Արման Իսկանդարյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

Հիմք ընդունելով Սահմանադրության 95-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 4-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 4-ի «Ազգային ժողովի պատգամավորներ գրանցելու և մանդատներ տրամադրելու մասին» N1 արձանագրությունը՝ դադարեցվել է Իմ քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Վահագն Գրիգորյանի՝ ավագանու անդամի լիազորությունները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **2019** թվականի հունվարի **22**-ի «Երևանի ավագանու անդամ ընտրված և լիազորությունները դադարած ավագանու անդամների մանդատների Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներին տալու մասին» N **15** արձանագրության համաձայն՝ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Արման Անտոնյանին, Անահիտ Ասատրյանին, Տիգրան Գալստյանին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2019** թվականի հունվարի **29**-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **30**-րդ հոդվածը.

1) Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի N**10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հոկտեմբերի **31**-ի N**56**-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

3) «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

4) «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

5) Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

6) «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

7) «Ամերիա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

8) Քաղաքացի Լևոն Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

9) Քաղաքացի Սարգիս Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

10) Քաղաքացի Իգոր Խաչատուրովին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

1. ԼՄԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի N**10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Ջեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Լևոն Հովհաննիսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի

հոկտեմբերի 29-ի N10-Ս որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Հռիփսիմե Առաքելյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Հասմիկ Խաչունց - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Գրիգորի Երիցյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի N16-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ս որոշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | Անշարժ գույքի կառավարման վարչություն | | | | |
|----|------------------------------------------------------------------------------------|---|--------|--|--------|
| 1 | վարչության պետ | 1 | 346000 | | 346000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 1 | 322000 | | 322000 |
| - | Շենքերի, շինությունների, ոչ բնակելի տարածքների հաշվառման և կառավարման բաժին | | | | |
| 3 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 4 | գլխավոր մասնագետ | 2 | 225000 | | 450000 |
| 5 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 6 | առաջին կարգի մասնագետ | 3 | 207000 | | 621000 |
| - | Հողի ընթացիկ հաշվառման և հողօգտագործման բաժին | | | | |
| 7 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 8 | գլխավոր մասնագետ | 2 | 225000 | | 450000 |
| 9 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 10 | առաջին կարգի մասնագետ | 3 | 207000 | | 621000 |

| | | | | | |
|----|------------------------------------------------------------------------------|-----------|--------|--|----------------|
| - | Հողօգտագործման պայմանագրերի կնքման, հաշվառման և վերահսկողության բաժին | | | | |
| 11 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 12 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 13 | առաջին կարգի մասնագետ | 3 | 207000 | | 621000 |
| 14 | երկրորդ կարգի մասնագետ | 1 | 201000 | | 201000 |
| - | Անշարժ գույքի համարակալման, հաշվառման և վերլուծության բաժին | | | | |
| 15 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 16 | գլխավոր մասնագետ | 1 | 225000 | | 225000 |
| 17 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 18 | առաջին կարգի մասնագետ | 4 | 207000 | | 828000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 29 | | | 6725000 |

2) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վերահսկողության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | |
|---|------------------------------------|-----------|--------|--|----------------|
| | Վերահսկողության վարչություն | | | | |
| 1 | վարչության պետ | 1 | 346000 | | 346000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 1 | 322000 | | 322000 |
| 3 | գլխավոր մասնագետ | 11 | 250000 | | 2750000 |
| 4 | առաջատար մասնագետ | 6 | 225000 | | 1350000 |
| 5 | առաջին կարգի մասնագետ | 3 | 219000 | | 657000 |
| 6 | գործավար | 1 | 164000 | | 164000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 23 | | | 5589000 |

3) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» ստորում «454» և «111542300» թվերը փոխարինել համապատասխանաբար «479» և «117314300» թվերով.

4) «Ամբողջը» ստորում «2005» և «437960100» թվերը փոխարինել համապատասխանաբար «2030» և «443732100» թվերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի «Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N 56-Ն որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 51 , դեմ` 0, ձեռնպահ` 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

«Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը` 0051, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Զարյան փողոց հ.27, պետական գրանցման համարը` 264.120.05050):

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 50 , դեմ` 0, ձեռնպահ` 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ - «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը` 0010 ՀՀ, ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3, գրանցման համար` 264.140.02367):

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 44 , դեմ` 0, ձեռնպահ` 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՍԵՑԻՆ - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Էռնեստ Ավանեսով - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաչատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Իգարբեյլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Հայկ Հովհաննիսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանը:

«Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Ա. Խաչատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ **2019** թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **2019** թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՅԻՆ - «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեց.

1. Հռիփսիմե Առաքելյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

«Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 16.30-ին:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 11 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արմեն Գալջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Լևոն Ջաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

9. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

10. Հայկ Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

11. Միքայել Մանրիկյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության

ղեկավար

Ելույթով հանդես եկավ «Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Դավիթ Մկոյանը:

«Էլիտ-Պլազա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի խորհրդական Ա. Գևորգյանը և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Ա. Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 4 , դեմ՝ 42, ձեռնպահ՝ 5

Որոշումը չընդունվեց

7. ԼՍԵՑԻՆ - «Ամերիա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Ամերիա» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **38** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **3**, դեմ` **30**, ձեռնպահ` **5**

Որոշումը չընդունվեց

8. ԼՍԵՑԻՆ - Քաղաքացի Լևոն Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Քաղաքացի Լևոն Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ-1. Թույլատրել քաղաքացի Լևոն Բարդակջյանին` **2019թ.** ընթացքում սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **33** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **20**, դեմ` **4**, ձեռնպահ` **9**

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

9. ԼՍԵՑԻՆ - Քաղաքացի Սարգիս Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Սարոյանը, քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ.Նավասարդյանը:

«Քաղաքացի Սարգիս Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Քաղաքացի Սարգիս Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **43** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **13**, դեմ` **8**, ձեռնպահ` **22**

Որոշումը չընդունվեց

10. ԼՍԵՑԻՆ - Քաղաքացի Իգոր Խաչատուրովին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Քաղաքացի Իգոր Խաչատուրովին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Քաղաքացի Իգոր Խաչատուրովին ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **42** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **18**, դեմ` **7**, ձեռնպահ` **17**

Որոշումը չընդունվեց

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ